

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԳՐԵՆԱԿԱՆ  
ՊԵՏՈՒԹՅՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ  
N ՊԱՊՁԲ - 10/7-1-ՏԿՆ-6-11

ք. Երևան

«-----» ----- 2011թ.

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Կ. Իսախանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից՝ և «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Առուստամյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի **գրասենյակային նյութեր և գրենական պիտույքներ** (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Ապրանքի մատակարարումն սկսվում է 2011 թվականի փետրվարից, և իրականացվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցին համապատասխան:

1.3 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

### 2. Ապրանքի գինը և վճարման կարգը

2.1 Սույն պայմանագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի գինը, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է 725.1 հազար դրամ: Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով հաշիվ-ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության (ձև N 4) հիման վրա սույն պայմանագրի N3 հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

### 3. Այլ պայմաններ

3.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի միջև պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Կողմերը սահմանում են, որ սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում են Պետական գնումների գործակալության և Վաճառողի միջև 2010 թվականի ապրիլի 22-ին կնքված N ՊԱՊԶԲ-10/7-1 գնման նախնական պայմանագրով հաստատված օրինակելի պայմանագրի դրույթները:

3.3 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են --- էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

#### 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գ Ն Ո Ր Դ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

ՀՀ տարածքային կառավարման  
նախարարություն  
ք. Երևան, Կառավարական տուն 2  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011003150, 900011003168  
ՀՎՀՀ 02578338

«Սմարթլայն» ՍՊԸ  
ք. Երևան, Չարենցի 1  
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ  
Հ/Հ 217002079267001  
ՀՎՀՀ 01548908

-----  
(ստորագրություն)  
Կ.Տ

-----  
(ստորագրություն)  
Կ.Տ